

Ա ՏԻՒՈՆՈՎ  
ԲԵՐՅՈՎԵԼԸ



891.715

• S-58

ՊԵՏՐՈՍ 1935 ՅԵՐԵՎԱՆ

30 MAY 2011

35-K  
Հա1035  
891.715  
S-58

Ն. ՏԻՒՈՆՈՎ

# ԲԵԹՀՈՎԵՆԼ

Թումանյանց տպան բարգի.  
Գ.Ա.ՌԴԻՒՅԵՍ.Ն.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1934

21 SEP 2013

5302

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան  
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Լեզվական խմբագիր՝ Ա. Առատաճյան  
Մրբագրիչ՝ Գար. Հակոբյան



ՀՀՊ 8606, հրատ. 3041, պատ. 1040, տիրաժ 3000

Հասնածած և արտադրության 26 հունիսի 1934 թ.

Դուրսադրված և տպագրության համար 20 սուհմբիրի 1934 թ.

Պետրասի տպարան, Յերևան, II Գնունի, № 4

59212-66

I  
Մոտակա սարից քաղաքն այնքան փոքր եր  
յերեռում, վոր թվում եր թե կարելի յե դնել  
գրապանը և տաներ

Այստեղ կանգնած եր քաղաքային վարչու-  
թյան հաստ, գորշ շենքը, այստեղ բլրի վրա  
տեղակորված եյին կրպակներ, վորտեղ վաճառ-  
վում եյին միայն կոշկի ներկ և հատակի խո-  
ղանակներ։ Ամբողջ ուտելեղենը վերջացրել  
եյին այն քսան հազար զինվորները, վորոնք  
լերկու որ անընդհատ անցնում եյին քաղաքից  
գետի նոր գիրքերը։ Այդ կրպակների մեջտեղը  
ցցվել եր բողոքական լեկեղեցին, վորի մեջ  
թափառում եյին փողոցի կատուներն ու հավե-  
րը և ներս թռչում ծտերը։ Ցեկեղեցու մոտ  
պատապարվել եր կանաչ, ցածրիկ կտուրով մի  
պանդոկ, իսկ հեռվում հողմագացները շարժում  
եյին իրենց մոխրագույն թևերը։

Պանզոկի գիմացի հին ապակյա դռան վե-  
րեից մի քիչ թեք կախ եր տված մի տախտակ,

վրան գրված սև տառերով—լուսանկարչատունը  
Տախտակի վերևում ներկով գրված եր—շատ  
եմ խնդրում ներս դար:

Տուրզ, միջին քաշ ունեցող, նոր շինել հա-  
զած հուսաբը, խթանները շխկացնելով, բաց  
արավ դուռը և ներս մտավ:

Բարձր սեղանի յետելից նրան գիմավորեց  
խիտ դեղին մազերով մաքուր լատիշ որիորդը:  
— Ո՞վ ե այստեղ նկարում,—հարցրեց հու-  
սարը:

— Յես,—պատասխանեց որիորդը:  
Նա մոտեցավ լուսանկարչական ապարատին  
և դործիքը շրջեց դեպի հուսարը:

— Ապասեցեք, որիորդ, մի քիչ կարգի բե-  
րեմ ինձ, — ասաց հուսարը և սկսեց հանել շինելը:

Հանելով շինելը, մի թեսածալքից հանեց  
սանրը, իսկ մյուսից՝ փոքրիկ հայելին և սկսեց  
սանրվել: Ապա վոլորեց փոքրիկ բեխերը, քի-  
թը մաքրեց թաշկինակով, կոշիկների փոշին ել  
մաքրեց թաշկինակով, վիզն ուղղեց, նստեց բազ-  
կաթողի մեջ ու մնաց այդպես ամսարժ:

Բայց որիորդն սպասողական վիճակում նա-  
յում եր և չեր սկսում նկարելը:

— Փչացել ե վորեւ բան, — հարցրեց նա-  
զացված, — ուղղեցեք, կարգի բերեք, յես կըս-  
պասեմ,

— Միթե դուք ձեր սուրը մերկացրած չեք  
նկարվելու, — ասաց որիորդը ժպտալով, — բոլորն  
այդպես են սիրում նկարվել: Կամ գուցե կը-  
ցանկանաք նստել փայտյա ձիու վրա: Մեզ ձու  
ալպակես ել են նկարվում:

— Շնորհակալ եմ, — պատասխանեց հուսարը  
կարմրելով, — վնչ, յես չեմ նստի: Նստեցեք ինք-  
ներդ: Յես վոչ խաղալիք եմ և վոչ ել յերեխա:

— Ապա մի ըոպե. նայեցեք այստեղ, խընդ-  
րում եմ: Պատրաստ ե:

Փակելով ապարատը, որիորդն սկսեց գրել  
կտրոնը:

— Ինչպես ե ձեր ազգանունը, — հարցրեց նա:  
— Փոքրիկ-Բաբկա, — կոճկելով շինելը, ա-  
սաց հուսարը:

Լատիշ որիորդի ձեռքից գրչակոթն ընկավ:  
— Ի՞նչու յեք ծիծաղում, աշխարհում ալ-  
պիսի ազգանուն չկա...

— Այ քեզ բան, — ասաց հուսարը, — մեր Սի-  
բիրում կա և Մեծ-Բաբկա, և Միջակ-Բաբկա, և  
Բաբկա-Յագողա: Գրեցեք և մի տարակուսեք—  
Բաբկա-Փոքրիկ:

Որիորդն ելի չեր հավատում, յերբ գուռը  
բացվեց և ներս մտավ յերկրորդ հուսարը՝ չոր  
ու բարակ, ինչպես ձիու մի տնտեսք բնիք:

— Փոքրիկ Բաբկա, — կանչեց նա, — այս մւմ

ևմ տեսնում, դու այստեղ, միթե դու բրիգադի  
շտաբում չեմ:

— Վոչ, յերբեք,—պատասխանեց Փոքրիկ-  
Բարկան, — յես նորից հեծելավաշումն եմ, իսկ  
դու, Կորշուննվ, նկարվելու յես յեկել:

— Վոչ, յես Բեթհովենին եմ բերել նկա-  
րել տալու...

Որիորդը նայում եր վարանած: Փոքրիկ-  
Բարկան վեր թռավ տեղից և սկսեց ծիծաղեր:

— Բեթհովենին նկարել, այ քեզ բան, այ  
հրաշք: Նա դոնից չի մտնի:

— Դրա համար ել յես եմ յեկել, լսեցեք, —  
դարձավ նա որիորդին, — ինձ հարկավոր ե, վոր  
դուք նկարեք բացափիկ ձիուն: Այդ ձին ձեկ  
հատ ե դիվիզիայում: Խելոք, քան դիվիզիոն-  
նին: Նա իմ ընկերն ե և նրան պետք ե ան-  
մահացնել՝ մի կերպ կողքից նկարելով: Մենք  
ձեզ կոնկենք ապարատը հրապարակ դուրս  
տանելու: Նա այնտեղ սպասում ե:

Յես վոչ մի անդամ ձի չեմ նկարել, յես  
չկիտեմ, — շփոթված պատասխանեց որիորդը:

— Հեշտ բան ե, — ասաց Կորշունովը, — ձին  
կանգնած ե ինչպես արձան, յես նրան կհամո-  
զեմ... Ավելի լավն այն ե, ասեք, թե ինչ կար-  
ժենա այդ:

Նրանք սկսել եյին խորհրդակցել, յերբ

հանկարծ հրապարակում դուան մոտ գոռգոռա-  
ցին մի քանի մարդիկ, ապա լսվեց դղրդյուն  
և ձայն:

— Այդ նա յե հուզվում, — ասաց Կորշու-  
նովը, — վազենք տեսնենք:

Ճվացող յերեխաների և կաթնավաճառ կա-  
նանց ամբոխի մեջ վազում եր մի կուզիկ՝ դե-  
ղին շորով և լայնեղը գլխարկով՝ հազիվ քարշ  
տալով հին ու կանաչավուն յերգեհոնը, իսկ նրա  
յետեից՝ դարձնագույն խալերով մի ձի, վորն  
ուզում եր, ինչպես ել վոր լինի, խիթ այդ  
կուզիկին: Կուզիկը չեր կարսդանում ուզիդ վա-  
զել, պտտվում եր սայթաքելով, պահվելով լե-  
րեխաների յետեկը: Յերգեհոնը քարշ եր գալիս  
նրա յետեից: Յերեխաներն ուրախ ձչում եյին.  
իսկ կանայք հառաչում:

— Բեթհովեն, — գոռաց Կորշունովը, — կան-  
գնիր, Բեթհովեն. յես այդպես ել գիտեյի: Յես  
նախազգուշացրի այդ հիմարին, վոր այստեղ  
նվազել չի կարելի: Բեթհովենը տգեղ նվազա-  
ծություն տանել չի կարող, իսկ նա նվազել ե  
իր արկը և ուրախացել. թող հիմա ել վազվզի:  
— Բեթհովեն, քեզ ասում են՝ կանգնիր:

Զին լսելով տիրոջ ձախնը, թողեց իր զվար-  
ձանալը: Նա մոտեցավ Կորշունովին և սկսեց  
քսքսվել նրա ուսին: Կուզիկը կանգ առավ հրա-

պարակի ծայրում և նայեց զարմացած և հուզված: Նրա հետ խոսեց շեկ բակերով, լայնաթիւ կունք լատիշը:

Բարկա-Փոքրիկը ձեռքը մեկնեց ձիուն:

— Ճանաչում ես, բարե՛, Բեթհովեն:

Չին ուղցրեց քթածակերը և հոտոտեց նրա ձեռքը, ապա յետ քաշվեց և մեկնեց աջ վոտքն անսաելի հալարտությամբ:

Ամբոխը ցնցվեց: Ցերեխաներն ուրախությունից նորից սկսեցին ճշալ, կանչել: Բարկա-Փոքրիկը բռնեց ձիու վոտքը և քաղաքավարի կերպով դրեց գետնին:

Կորշունովը հեռվից արհամարհանքով նայում եր նվազածուին:

— Միթե դա յերաժշություն ե՞ս Ահա լոիր...

Լատիշորիորդը դուրս եր բերել ապարատը և յեռոտանին ու սպասում եր:

Կորշունովը պայուսակից հանեց ֆլեյտան և

ասաց հասարակությանը.

— Հեռացնք. յես հիմա կնվագեմ իմ հորինածը՝ «Կուրլանդական աստղեր»:



Ֆլեյտայի առաջին հնչյունները լսելուն պես ձին մտածկու քայլեց շրջանի ներսում: Ամեն մի նոտայի հետ նրա քայլերն արագանում եյին. մի րոպեյից հետո նա քայլում եր տակտով, ինչպես ձիարշավում, բարձրանում յետեի վոտքերի վրա: Վերջապես նա կանգնեց իր ամբողջ, մեծ ու դարձնագույն հասակով և յերկու վոտքով գնաց տիրող մոտ:

Ուրախության ճիչերը ցնցեցին ողը: Ցերեխաները սուլում եյին ու բղավում: Լատիշը, վոր խոսում եր նվազածուի հետ, բարձր կանչեց:

— Շատ լավ ե, շատ լավ ե, Զարմանալի դպրոց ե: Այդ ցիրկ ե, ազնիվ խոսք, ցիրկ ե:

Ֆլեյտայի նվագը վերջացավ, Չին կանգնեց չորս վոտքերի վրա, և Կորշունովը կերակրեց նրան շաքարով:

— Ի՞նչպես նկարեմ յես դրան,—հարցրեց որիորդը:

— Շատ պարզ, ձեր արկղը կանգնեցրեք այստեղ...

Կորշունովը շուեց ձիու վիզը, կանգնեցրեց նրան ապարատի առաջ և ասաց.

— Բեթհովեն, նայիր այստեղ, շուրջդ մի նայիր, գլուխդ մի րոպե անշարժ պահիր: Մտածիր մի լավ բանի մասին: Դեհ, վերջապես, կանգ առ, թե չե կբարկանամ:

Զին թափահարում եր բաշը և մի վոտից  
մյուսին կանգնում: Վերջապես կորշունովը հան-  
գստացրեց նրան: Մինչ ողիորդը կամենում եր  
ասել՝ նկարում եմ—ճանձը նստեց Բեթհովենի  
քթին, և նա թափահարեց գունչը:

Նրան նորից հանգստացրին: Հասավ հանդի-  
սափոր վայրկյանը: Ամբոխը լուռ եր: Հուսար-  
ները պահել եյին իրենց շնչառությունը, Բեթ-  
հովենը լուրջ մտածում եր: Վոչ վոք չնկատեց,  
թե ինչպես ամբոխին մոտեցավ գնչուի նման  
մի թուխ դրագուն: Նա նայեց հանդիսին մաս-  
նակցողներին, թքեց, ապա կոացավ, վերցրեց  
մի քար, վոչ մեծ և  
վոչ փոքր, բայց բա-  
վական ծանր,ու խփեց  
ուղղակի ձիուն:

Որիորդն ասաց.

— Յես նկարում եմ:  
Յեվ հանեց ապա-

րատի խողովակի ծածկիչը:

Քարը կպավ ձիու կողին: Բեթհովենը թուավ  
առաջ և քիչ մնաց ապարատը ջարդեր: Բարկա-  
Փոքրիկը նայեց չորս կողմը, ինչպես Փոկուս-  
նիկ: Ամբոխն սկսեց վորոնել մեղավորին:

Դրագունը, առանց շտապելու, բարձրացավ  
գեպի սարը, բռունցքով սպառնալով:



— Սատանա,—ասաց բարկացած Բարկա-  
Փոքրիկը,—զգվելի դրագունը քիթը խոթում ե  
ամեն տեղ:

— Բարկ, կորշունով,—ձայն տվեց դրա-  
գունը,—նկարներից մեկն ուղարկիր ինձ, վոր  
կապեմ իմ ձիու պոչին:

Կորշունովը բարկությունից գունատվեց և  
զսպեց իրեն: Վերջապես բացեց բերանը:

— Դա միանառվն ե,—ասաց նա Բարկա-  
Փոքրիկին,—յես նրա հետ հաշիվներ ունեմ, նա  
իմ թշնամին ե: Լավ, յես նրան ցույց կտամ...  
կսպասենք մի քիչ...

Զիուն նորից կանգնեցրին: Ապարատը չըխ-  
կաց: Գործը վերջացած եր:

— Հիմա միասին դեպի եսկադրոն,—ասաց  
Բարկա-Փոքրիկը:

Այդադեղ կորշունովին մոտեցավ բակերավոր  
լատիշը:

— Իմ ազգանունը Պուակե յե,—ասաց նա,—  
Պուակե... Ինչպիսի յերաժշտասեր ձի յե, յես առա-  
ջին անգամն եմ տեսնում կյանքումս: Շատ լավ  
ե: Կարող եմ ձեզ մի բան հարցնել:

— Հարցրեք,—չարդությամբ ասաց կորշու-  
նովը,—բայց վոչ փողի մասին, փող չկա:

— Ինչու փող, —վախեցավ լատիշը,—դուք  
չեք կարող ներկայացում տալ իմ ապարակում:

Այստեղից շատ մոտիկ եւ Մի քանի քայլ եւ Իմ  
փոքրիկ ընտանիքը շատ կուրախանա:

— Վո՞չ, ներկայացում չեմ կարող տալ, —  
ասաց կորշունովը, — յես ծաղրածու չեմ, գնա-  
ցե՞ք հեռացեք:

— Ո՞յ, ինչ չար մարդ եւ հուսարը, — ասաց  
լատիշը հեռանալով և սիրահար աչքերով նայե-  
լով ձիուն վոտից միշկ զլուխ:

## II

Յերթի ժամանակ կորշունովի ֆլեյտան պա-  
յտակում ընկած մնում եր, իսկ յերբ եսկա-  
դրոնը կանգ եր առնում գիշերելու, կորշունովը  
հանում եր այդ ֆլեյտան և սկսում եր հափշ-  
տակված նվազը:

Նա նվազում եր յերկար ու գեղեցիկ:

— Մտածկու եւ նվազում, — ասում եյին  
հուսարները, — թեկուզ լաց լեղիր, թեկուզ ծի-  
ծաղիր... լավ եւ նվազում մարդը...

Նրա զարչնագույն մեծ ձին գնդի ցուցակ-  
ներում նշված եր «Զերտոպոլոս» անվամբ, բայց  
հաւանի չե, թե ով նրան Բեթհովեն անվանեց,  
և այդ անունը մնաց մշտապես: Նա յերաժշ-  
տությունը շատ լավ եր հասկանում, գնդում  
միակն եր այդ տեսակետից:

— Բարկա-Փոքրիկ, — ասաց կորշունովը, —  
գնանք, յես քեզ համար և Բեթհովենի համար  
կնվազեմ իմ հորինածը՝ «Աշնանային լուսինը  
բանջարանոցում»:

Նրանք հեռացան եսկադրոնից գենը: Կոր-  
շունովը կանգ առավ ծառի մոտ, հենվեց նրան  
ու նվագեց:

Բարկա-Փոքրիկը լսում եր ու հառաչում  
զգացված:

Բեթհովենը պոկում եր խոտը և դժգոհ աղմը-  
կում պոչով:

Ունկնդրելուց հետո նա ականջները կախեց  
ցած և մոտեցավ կորշունովին: Յերբ ֆլեյտան  
լուց, նա կանգ առավ, լեզուն քիչ դուրս հա-  
նեց և թռչկոտեց...

— Հավանեց, հավանեց, — որախացած ասաց  
կորշունովը, — շնորհակալ եմ: Այդ գեռ բոլորը  
չի, — նա համբուրեց ձիու ճակատը, — բայց յես  
քեզ մարդ եմ դարձնելու: Միայն թե ինձ լավ լսիր:

— Յերեելի յես նվազում, — ասաց Բարկա-  
Փոքրիկը, — կարծես «Հայրենիքի կարոտ» նվազը  
լինի: Լավ ես սիրո ճմում: Ելի կլսեյի:

Այդ յերեկո կորշունովի նվազած բոլոր ոռ-  
մանսներից Բեթհովենին ամենից շտա զուր յե-  
կավ «Աշնանային լուսինը բանջարանոցում»  
ոռմանոր:

Մեկ շաբաթից հետո Բաբկա-Փոքրիկը և կորչունովը գնացին հետախուզության: Նրանց հետելին և յերկու հուսարներ: Այդ փոքրիկ ջոկատը պետք է անցներ մինչև գետի բարձր ափը և անտեղ դիրք բռներ մինչև առավոտ: Առավոտյան նրանց փոխարինում ելին դրագունները:

Նրանք անցնում եյին խիտ անտառի միջից, կածանով: Աստառը շատ մութն եր և կասկածներով լի, կարծես թե այնտեղ թագնված եյին. հազարավոր թշնամիներ: Ամեն անգամ, յերբ թիերի մեջ լսվում եր զորեե խշոց, Բաբկա-Փոքրիկը ձին քշում եր զեպի մացառները, բայց վոչ վոքի շեր աեսնում. սակայն դրանով նրանք թեթևություն չեյին զգում:

Բեթհովենը գնում եր թեթև քայլվածքով, նայում շուրջն խակական զինվորի պես և վախենում յերկու կողմից վազող յերկար սովերներից:

Հանկարծ ձախ կողմից թափուտում շատ պարզ կերպով լսվեց աղմուկ, Կորշունովը սուրբ մերկացրած թռավ այնտեղ:

Թափուտից առկայծեց լույսը և շտապ ծածկվեց մեկի կողմից:

— Ի՞նձ հետեւցեք, — կանչեց Կորշունովը, — այստեղ մարդ կա:

Տաս քայլ առաջ անցնելուց հետո նրա առաջ բացվեց այսպիսի մի տեսարան. խիտ ան-

տառի փոքրիկ բացատում կանգնած եր բրեգենտով ծածկված մի սայր: Նրա մոտ վառվում եր փոքրիկ խարույկ: Խարույկի մոտ հավաքված եյին ինչ-վոր գաճաճներ, ցնցոտիների մեջ: — կանգնիր, — ասաց Կորշունովը, — ովքեր եք:

Չորս հեծյալներ շրջապատեցին բացատը: Կրակը թեժացրին և տեսան, վոր նրանք վոչ թե գաճաճներ են, այլ յերեխաներ: Բոլորից մեծը, 12 տարեկան մի տղա, առաջ անցավ և տուսերեն ասաց:

— Գաղթականներ ենք մենք: Ահա թե ով մենք...

— Իսկ ի՞նչ եք անում այստեղ մենակ: Անտառն եք այրում...

— Մենմենակ չենք, մեզ հետ եւ և մեր պառագ տատը, — ասաց հաստիկ թղուկը:

— Իսկ մեր և ձեր տատը,  
— Նա գնաց ձին թագցնելու...

Յեվ ձիշտ վոր մացառների մեջ խշշոց կար, կարծես այնտեղ գիշերային բրդոտ արջ եր փաթաթվել: Հետո գուրս յեկավ շալի մեջ փաթաթված պառագ կինը, կորացած, մեծ քթով և ճրագը ձեռքին, վորը ծածկել եր շալի տակ:

— Փախստականներ ենք մենք, — խոսեց նա, — գերմանացուց ենք թագնվում...

— Տղերք, ի՞նչ անենք, — ասաց կորշունովը, — գետը մոտիկ է: Պոստը դնենք ձորի գլխին, յերկու-յերկու կանգնենք, իսկ յերկուսը մնան այստեղ: Այստեղ մենք թեյ կպատրաստենք և բնոհանրապես ..

Հուսարները համաձայնեցին. առաջին հերթին գնացին Բարկա-Փոքրիկը և Կորշոնովը՝ կանգնելը շատ ձանձրալի յեր, մթան մեջ վոչինչ չեր յերեսում։ Ներքեսում քչքչում եր զետը, վերելից մաղում եր անձրելը։ Իրենց պահակաժամը օինչև վերջ կանգնեցին և ապա վերադարձան կրակի մոտ։

— Սյստեղ արդեն աշխատում եր պառակը՝  
Նա լերեխաներին պառկեցը սայլի մեջ քնե-  
լու, ծածկեց, հավաքեց վեց գոճիներին մի-  
տեղ, շրջափակեց նրանց կողովներով, վերևից  
կապեց փայտին, վորպեսզի նրանք չցըվեն։  
Յերկու թեյաման դրված եր կրակին, ինչ-վոր  
արդանակ յեռում եր պղնձի մեջ։

— Այս ինչ արկդ ե,—հարցըց կորշունովը  
պառապին,—կարելի՞ յե նստել մրա վրա:

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ — բղավեց պառավը —  
դա զրամոֆոն ե:

— Հարմարություններով եք ապրում, տաշտի, — ասաց Կորշունովը:

— ՅԵՐԵՒԱՆԵՐՐ բերին։ ՆՐԱՆց համար տխուր

Ե, իսկ ինձ հարկավոր չեմ վերջացրեք պատեռագմելու:

— Ճիշտ ե, տատիկ, — ասաց Բաբկա-Փոքը իկը:  
Թող կայտերը գցեմ տակս և պառկեմ կողքիս:

Բեթհովենին կապելով ծառից, գարու տոպ-  
լակն անցկացրեց նրա գլուխը։ Զին կերավ  
մինչև վերջը և տոպրակը վար ձգեց։ Առանց  
թամբի պառկեց ծառի տակ և սկսեց նսջել։

Կորչունովս ել պառկեց կրակի մոտ:

Նա քննեց խորը և յերկար, յերբ նրա քունը  
թուլացավ, հանկարծ նրա ականջին ինչ գոր  
դղբդիտն հասավ, և նա զարթնեց: Նրան թվում  
եր թե զերձանական հեծյալները մեկը մյուսի  
յետեից թռչում են խարույկի վրայով և խփում  
նրա գլխին: Իսկ իրոք բան չկար:

59212-66

Ծառի մոտ իրեն կտրատում եր Բեթհովենը։  
Նրա վոտքերը փաթաթվել եյին, և նա չեր կա-  
րողանում դոփել։ Բայց նա գոռում եր շատ  
բարձր, վորքան կարող եր։ Նրա առաջ ճշում  
եր գրամոֆոնը, վորպես չար վոգի՝ շվացնելով  
և ֆշագնելով։

Գրամոփոնի շուրջը կանգնած եյին անձանոթ զինվորներ, վորոնք ծիծաղում ու զվարձանում եյին:

Պառակը գժղոհ, բայց վախկոս, փնթփնթում  
եր: Յերեխաները զարթնեցին և, աչքերը ճպճը-  
պացնելով, բրեզենտը հետ տարան, նայեցին



կախով և սքանչացած։ Գոճիները բարձր խըլ-  
խոացնում են։

Բաբկա. Փոքրիկը հարձակվեց կարճիկ սեա-  
մոթ գնչուի նման դրագունի վրա ու կանչեց։

— Անպիտան դրագուն, վերջ տուր, բավա-  
կան ե ծաղրել կենդանուն։

— Քո կենդանին չե, — պատասխանեց դրա-  
գունը և դառնալով տեսավ, վոր, Կորշունովը  
զարթնեց։

— Կորշունով, այս իմ կողմից քեզ մի այուր-  
պրիզ եր, մենք յեկել ենք ձեզ փոխարինելու,  
իսկ դուք քնած եք։ Յես ել ասացի՝ թող կա-  
մաց-կամաց լարեմ մեքենան, բայց կամաց-կա-  
մաց չի լարվում, տես, քո կենդանին նստած ե  
պարում…

Բեթհովենը մոնչում եր վերջին ուժով և  
բողոքում, նրա աչքերը լցվել եյին արյունով,  
նա փրփուր եր թքում անողոք գրամոֆոնի սե-  
ռեխում, սակայն մեքենան աղմկում եր ու կտն-  
չում։ Նա ցանկանում եր իր աղմուկով խլացնել  
և մարդկանց, և ձիերի աղմուկը։

Այդ ժամանակ Կորշունովը հրացանի կոթի-  
ռեկ հարվածով ջարդ ու փշուր արեց գրամո-  
ֆոնի պլաստինկան և, հրելով հաղթված ու  
ուած արկղը, ընդհուպ մոտեցավ դրագունին։

Նրա դեմքը մոխրագույն եր, ինչպես արեա-



ծագի անտառը։ Նրա քնկոտ աչքերը կամաց հառեցին դրագունի վրա։

Նա բռնեց նրա հրացանի կաշվից և ասաց.

— Մի հեռանա, Ֆրանտով։ Մի հեռանա, վաղուց ե, վոր դու մոռացել ես Տիրուլյան ճահիճը, հօր։ Իսկ գեղին պորտուիզարը մոռացար։

Ֆրանտովն ել դարձավ այնպես մոխրագույն, ինչպես կորշունովը։ Նրա ձեռքերը լողում եյին, նա վոչ մի խոսք չասաց.

— Այստեղ քեզ հետ չեմ կրվի, — ասաց կորշունովը, — և չեմ ել ուզում կեղտոտվել քո պատճառով։ Գնա, բայց իմացիր, վոր քո բաղդավորությունն եր, վոր դու փոխում ես պոստ, այլապես դու Բեթհովենից վատ չեյիր պարի այստեղ։

Հետո նա բաց թողեց ֆրանտովի հրացանի կաշին, դրագունը կծկված գնաց անտառի կածանով՝ բոլոր ընկերների հետ։ Նրա յետնից յերեխաները կանչում եյին սալլի սիջից։

— Գոճին տարան.. գոճին..

Կորշունովը ձեռքը խփեց իր կոշիկ ճտկին։

— Այ սրիկաներ...

Յեղ սկսեց ձին թամբել։

### III

— Ինչու դու այդքան չար զզացումով ես-

լցված դեպի դրադունը, — հարցը Բաբկա-Փոք-ը կը:

— Այո՛, դա հին պատմություն չե, — ծիծառեց կորշունովը։ Մեկ անգամ Տիրուլյան ճահճում դրագուններին ուղարկեցին հետախուզության, գերմանացիները նրանց շըջապատեցին, մի մասին ջարդեցին, մի մասն ել վերադարձավ, բոլորը զենքերը կորցրել ելին.. Ինչ կարող ես անել։ Մյուս որը մեր եսկադրոնն ուղարկեցին գերմանացիներին անտառից քշելու։ Գնում ենք, գնում, նայում ենք ու տեսնում, թե ինչպես փախչում են դրագունները. այստեղ մի հրացան ե ընկած, այնտեղ մի ուրիշը, յերրորդը մի այլ տեղ, թաշկինակներ, գլխարկներ, խթաններ և գեղին պորտուիզար, ըստ յերեսույթին դա ֆրանտովինն եր։ Իսկ գերմանացիներ չկային։ Նրանք մթության մեջ իրենք իրենց համար կրակում եյին վայրի այծերին, վորոնք խշիշացնում եյին փշալարի մոտ։ Այստեղ ինչքան ասես՝ այծ կա, նրանք խփեցին մոտ տաս հատ։ Իսկ բլոկհառողի<sup>1)</sup> վոխարեն այնտեղ մնացել եր հին կոճղը.. Ահա այսպես եր դեպքը.. Բայց յերբ վերադարձանք, դրագուններին մի լավ ցույց տվինք։ Պորտուիզարը մինչեւ այժմ ել ինձ մոտ ե։

<sup>1)</sup> Փայտաշեն վոքրիկ բերդ

Նա գրպանից հանեց մի սովորական դեղին պորտափար, վորի վրա նկարված եր գրագունական ուսնոց և փորագրություն՝ Ֆրանքով:

— Բա վմրտեղ եյի լես այդ ժամանակ, վոր այդ մասին չգիտեմ, — հարցրեց Բաբկա Փոքրիկը:

— Դու այն ժամանակ վիրտվոր եյիր և հիվանդանոցում պառկած... Այդ ժամանակից ել ֆրանտովը, ուր վոր հանդիպում ենք, թունավորում ե իմ կյանքը: Բայց ինձ ինչ, յես ամեն ժամանակ այդ պորտափարով կարող եմ նրան ճմլել, վշտացներ:

Այսպես զրուցելով նրանք լեկան եսկադրոն: Նույն յերեկոյան յերկու եսկադրոն գնաց ձախ թեր՝ ոգնելու նահանջին: Յերբ նրանք տեղ հասան, ուր գնում եյին համաձայն հրամանի, արդեն մութն եր և խաղաղ: Զարդված հետեւակը նահանջում եր գունդ-զունդ և անցնում ճահճից՝ թույլ հրացանաձգությամբ: Դիմացն ուրախ ճթճթոցով այրվում եյին ինչ-վոր մենակ ընկած տներ, ցախատներ: Այրված ավտոմոբիլն ընկած եր կողքի կայտարանի մոտ, ոյուներից կախ եյին ընկած հեռագրաթերի մնացորդներ: Գերմանացիներն անցել ելին անտառով:

Մութ և անտանելի գիշեր եր գալիս: Հարմագոր եր հեռանալ: Անտառում չեր կարելի

մնալ և ուրիշ վոչինչ: Մացառների միջով անհնար եր անցներ նրանց մեջ թագնված եյին գերմանական հետախույզները: Նեղ ձանապահներ, վոր զուգահեռ եր յերկաթուղու հողաթմբին, յերեմն քանդված, բացված եր լինում հսկա ավաղափոսերով, յերեմն ել անանցանելի ճահճներով:

— Ըսկել ենք, — ասում ելին հուսարները, — վոչ տակ կա, վոչ գլուխ:

Յելք չկար. այդտեղ զինվորները տրտնջացին և բարձրացան հողաթմբի վրա: Մեծ դըժվարությամբ տեղ գտան, վորտեղից կարելի յեր անցնել ոելսերի վրա, և շարունակեցին դրանց վրայով. ձիերը սայթագում եյին. հողաթմբի յերկու կողմերում կային այնպիսի խորությամբ փոսեր, վոր կարելի յեր այնտեղ դցել վողջ յերկիրը:

— Կորչելու լեն քեզ հետ, Բեթհովեն, — քթի տակ ասում եր Կորշունովը՝ իր զարկոցներով աշխատացնելով հողնած ձիուն. — Հետ տեսնի դու— նաև կոնսերվատորիան, քեզ հետ միասին մենք տարտարոսը կերթանք:

Այստեղ մութ յերկնքից բարձրացավ գեղին, կեռ լուսինը: Շարքերից անցավ թեթևության հառաջանք: Լուսափորեց, բայց դժվարությունը մնաց: Յետեղ՝ անտառում կրակում ելին գեր-

մանացիները, ճարճատում եյին հրդեհ երը:  
Ներքել նույն անդունդներն եյին՝ տասնվեց  
հարկանի: Զիերը վախկոտ սղմվում եյին մի-  
մյանց, նստողները վախենում եյին ցած նալեր:

Շփոթությունը կանգնեցրեց առաջիններին.  
մարդիկ թուան ձիերից և ականջ դրին: Անվերջ  
առաջ ելին ձգվում ոելսերը և անհայտանում:  
Կորշունովը լսում եր, թե ինչպես հեռվից,  
իբենց դիմացից լսելի լեր ականջ ծակող սուլոց:

Պարզվեց, վոր գնացքն ե գալիս: Ի՞նչ գնացք  
ե. զրահակի՞ր ե, ի՞նչ ե. մեզ համար ծանր եր.  
բոլորն շտապում ելին և դոփում տեղում. բայց  
ահա լսվեցին հանգստացնող ձայներ:

— Ընկերներ, առանց շփոթության. բոլոր  
անցեք գեղի զծի աջ կողմը, մաքրեցեք ձախ  
կողմի ճանապարհը: Զիերը սանձից քաշելով  
տարեք:

Հրամանները դադարեցին: Դիմացն արդեն  
նկատվում եր շոգեքարշի սև պատկերը. նա  
այնպես ուժգին եր շնչում, վոր ձայնը տարած-  
վում եր շատ հեռու: Նա հետզհետե զառնում եր  
ավելի սարսափելի, կարծես զնում եր յերկու  
անիվների քաշած հետքերով, բոնելով ամբողջ  
ճանապարհի յերեսը:

Հանկարծ առաջից գնացողները կանգ առան.  
նրանց առաջ ընկած եր յերկաթուղու անպետք,

ցանցավոր կամուրջը: Առաջին ձին գնաց, վոտքն  
ընկավ յերկու տախտակների արանքը, ընկավ,  
ջարդեց ծունկը և սկսեց ջարդել իրեն: Նրան  
ոգնեցին կանգնելու և անցնելու, սակայն մնա-  
ցած ձիերը հրաժարվեցին առաջ անցնել:

Շոգեքարշը հետզհետե մեծանում եր՝ ինչ-  
պես մի հրեշ. նա ֆշացնում եր, կայծերը թռչ-  
կոտում, պտտվում, թափվում եյին նրանից  
վերև: Զիերն սկսեցին ականջները խղել և  
աքացի տալ: Սկսվեց շփոթ. ամենաքաջերն  
իրենց կորցրին. ձիերը չեյին ցանկանում անց-  
նել կամուրջից և գնալ ոելսերով, վորոնց վրա-  
յով սլանում եր շոգեքարշը:

Այդ ժամանակ կորշունով առաջ անցավ,  
հանեց ֆլեխտան, սկսեց մեղմիկ յերգը «Աշնա-  
նալին լուսինը բանջարանոցում», վորի ձայ-  
ները հնչեցին խոնավ և ծանր ողում:

Դա Բեթհովենի սիրած յերգն եր, և ահա  
այդտեղ պատահեց այն, ինչի մասին մարդիկ  
յերկար ժամանակ պատմում եյին գնդում:  
Բեթհովենը մոռացավ հոգնածությունն ու վախը  
և քայլեց հաստատ, կորշունովի յետեից, կար-  
ծես թե նա զնում եր ծանրթ դաշտավայրով:  
Նրան խորհրդավոր լուռթյամբ հետեւում եր ձի-  
երի բազմությունը: Զիերը քայլում եյին ան-

ընդհատ, քրտնում եյին վախից, սալթաքում  
եյին՝ զսպելով իրենց և առաջ անցնում:

Ծոգեքարշը հասավ, նա ընդամենը մի վա-  
զոն եր բերում, նա գնում եր պայթեցնելու  
ջրմուղները. մեքենավարն արագացրեց ընթաց-  
քը, և շոգեքարշն արդեն սողում եր ձիերի հետ  
կողք-կողքի, ատելությամբ փնչացնելով նրանց  
մեջքին:

Վերջապես անցավ. ձախերի թնդյունը, ու-  
րախությունն ու կրքոտ հայնոյանքը հետեցին  
նրան, ինչպես լերգեցողություն:

— Տեղ ե գտել անցնելու, — մրթմրթում եյին  
հուսարները, — քիչ եր մնացել բոլորին տրորեր:

— Ա! քեզ բան, — պատասխանեց Բաբկա-  
Փոքրիկը, — ել վորտեղն պիտի գնա, յեթե վոչ  
ուլսերի վրայով: Դու վրա մի քշիր, քո ձին իո՞  
ձիու խոտն ե ուտում, ի՞նտ պահիր:

Կորշունովը պահեց ֆլեյտան, լիզեց չոր-  
շրթունքները, դարձավ Բեթհովենին, համբուրեց:  
Նրա դունչը և թամբին նստելով ասաց.

— Արդ, սիրելիս, քեզ համար ոպերա չե:

#### IV

Նրանք կանդ առան մի բարոնի կալված-  
քում, վոչ հեռու այն քաղաքից, վորտեղ լու-  
սանկարեցին Բեթհովենին: Կալվածքը մեծ եր  
և աղայական, բայց լավ բաներ քիչ գտան:

այնտեղ: Բոլոր լավ բաները փախուստի նա-  
խորյակին տերը հավաքել ու փակել եր քարա-  
շեն մեծ նկուղներում:

Հետո լատիշները, կալվածատերերի բատ-  
րակները, յեկան նկուղների մոտ և ջարդեցին  
կողպեքները, բոլորը բաժանեցին իրենց մեջ՝  
սկսած բարոնների բարձերից, վորոնք լցված  
եյին փափուկ աղվամազով, մինչև դրոշմիչները,  
վորոնցով նշանում եյին ծառերի կոճղերը...

— Բաբկա-Փոքրիկ, — ասաց ընկերոջը Կոր-  
շունովը, — յես կարոտել եմ լավ մարդկանց...  
Գնանք քաղաք:

— Գնանք, — պատասխանեց Բաբկա-Փոք-  
րիկը, — գնանք մի քիչ ժամանցենք այնտեղ:

Քաղաքում խոնվել եյին և դրագուններ, և  
հուսարներ. յերեկոյան նրանց թիվը սաստիկ  
շատացել եր, Այդ նշանակում ե, վոր ամբողջ  
գունդը հավաքվում ե քաղաքի մոտ՝ հանգստա-  
նալու համար:

Յերկու հուսարներ մոտեցան փոքրիկ ու  
մաքուր պանդոկին: Նրանք անցան յերկորդ  
դռնից, վորպեսզի ձիերը կապեն բակում: Բա-  
կում գոճի եյին խորովում. մեկը բռնել եր վոտ-  
քերից, մյուսը՝ գլխից. ճարճատում եր կրակը,  
և շուրջը տարածվում եր ճարպի և մազի ձեն-  
ձերահոտը: Աշնանային ուժեղ քամին բոլըում

Ե՞ր բոցը: Յերկու կիսամերկ ծառեր որորում  
ելին իրենց ճյուղերը:

Հուսարները ձիերը կապեցին լուսամուտին  
այնքան մոտիկ, վոր Բեթհովենն իր դունչը  
լուսամուտից մեծ հետաքրքրությամբ մտցնում  
եր պանդոկ:

Յերբ Կորշունովը բաց արեց պանդոկի միակ  
դահլիճի դուռը, նա նկատեց, վոր յերկու միաց-  
րած սեղանների շուրջը նստած դրագունների  
հետ և նաև ֆրանտովը:

Դրագունները նստել ելին, ինչպես իրենց  
տանը. սրերը և հրացանները դեմ ելին արել  
պատին. ըստ յերեսույթին նրանք նոր ելին յե-  
կել շրջելուց: Բակերավոր լատիշը, վոր հրա-  
վիրում եր Կորշունովին ներկայացում տալու,  
հյուրասիրում եր այդ կամպանիային:

— Բարե՛ ձեզ, հուսարներ, — ասաց Ֆրան-  
տովը. — աղ ու հացը չմոռանանք...

— Բարե՛ ձեզ, դրագուններ, — պատասխա-  
նեց Բաբկա-Փոքրիկը, — վա՞ր քանին և բերել  
ձեզ այստեղ:

Այսպիսի սիրախոսություններ փոխանակե-  
լով, հուսարներն իրենց համար թե՛ս պատվի-  
րեցին: Հաստ և կարմիր թշերով աղջիկը նրանց  
համար բերեց թեյաման և յերկու բաժակ:

— Սիրով կխմեմ, — ասաց Կորշունովը և

ափսեն տաք ջուր լցնելով վողողեց բաժակն ու  
թեյ պատրաստեց,

Բայց հազիվ նա մի ումով արեց, դեմքը  
ծովուեց և սկսեց թքել աջ ու ձախ:

— Այս ի՞նչ ե, ի՞նչ են մեզ խմեցնում, —  
ասաց նա վերջապես, — այս ի՞նչ ե. վորտեղ ենք  
յեկել սա պանդոկ ե, թե դեղատուն:

Բաբկա-Փոքրիկը խմեց իր ափսեյից, նրա  
ճակատն ել ծածկվեց խորշոմներով, նա թողեց  
բաժակը և ամբողջ ափսեն լցրեց վողողած ջրի  
ամանի մեջ. թեյը և սառն եր, և տաք. բաժա-  
կի կողքերին տաք եր, իսկ մեջ տեղը մի ինչ  
վոր բան պահպած եր, կարծես բերնումդ սա-  
ռուց և հարգում և դեղատան հոտ եր գալիս:

— Որի՞րդ, — զոռացին նրանք, — որի՞րդ,  
որը ցերեկով անմեղ մարդկանց թունավորում եք:

Աղջիկը վախեցած մոտ վաղեց և ձեռքերը  
շարժելով բացատրեց.

— Դա անանուխի թեյ ե, անանուխի, բո-  
լորը խմում են: Յես վոչինչ չգիտեմ, դա այս-  
տեղ շատ ե դուք գալիս. շատ ոգտակար ե...

— Մեկին ոգտակար ե, մյուսին՝ վոչ, — ա-  
սաց Բաբկա-Փոքրիկը, — ավելի լավ ե ձեզ սուրճ  
ավեք:

Իսկույն կտամ, իսկույն, — ասաց աղջիկը,  
շտապ հավաքելով թեյամանը:

Նա հազիվ սրճամանն ու կաթնաժանը դրել  
եր սեղանին, յերբ դրագունները խմբով գո-  
ռացին.

— Սուրձ, սուրձ, սուրձ տվեք մեզ:

Աղջիկը դժգոհ կերպով ձեռքը թափահա-  
րեց:

— Սուրձ չի լինի. չկա, չկա:

Դրագուններն ավելի ևս գոռացին: Պան-  
դոկի սակավաթիվ հյուրերը, յեկվոր գյուղա-  
ցիները հետաքրքրությամբ և վախով նայում  
են, թե ինչ ե կատարվում.

— Ի՞նչ են ուզում այդ քուռակները, — արց-  
րեց Կորշոնովը:

— Երանց սուրձ չի տրվի, — ասաց աղ-  
ջիկը. — Նրանցից յուրաքանչյուրը խմել և յե-  
րեք թեյաման. այդպես չի կարելի խմել, մեզ  
մոտ այդպես չեն խմում: Մեկ բաժին և բավա-  
կան ե. տիրուհին արգելում ե, մեկն ամբողջն  
ե խմում, իսկ մյուսին բաժին չի մնում:

— Սուրձ, — գոռում ելին դրագունները և  
դոփում իրենց մեծ կոշիկներով ու դեղին  
խթաններով:

Աղջիկը թագնվեց սեղանի յետեր:

— Ձեզ սուրձ չկա, — ձայն տվեց Կորշո-  
նովը, — արածեցեք անանուխի խոտը, ինչպես  
Տիրույթան ճահճում:

Ֆրանտովը, լսելով այս, այլայլվեց, նրա  
աչքերը կայծեր արձակեցին,

— Ընկեր դրագուններ, — առաջ նա տարո-  
րինակ ծիծաղելով, — այս ում դունչն ե մեր  
լուսամուտից ներս խոթվել:

— Բոլորը հետ դարձան և տեսան Բեթհո-  
վենին: Նա մտածկութ լիզում եր ապակին ու  
դիտում պանդոկը:

— Սա ում դունչն ե, — շարունակեց Ֆրան-  
տովը. — միթե սա ազնիվ դունչ ե, սա մի ծաղ-  
րածուի լարու լե, վորին դուրս են շպրտել  
ցիրկից: Ընկերներ, նա կարողանում ե լավ  
պարել, միայն այդ: Այստեղ չե նվազածուն,  
վոր յես ձեզ մի բան ցուց տայի. միթե սա  
ձի յե. այդպիսի ձիերին զոմում ծակերն են  
ճխտում, վոր քամի չփչի:

Այստեղ Կորշունովն ավելի տարորինակ ծի-  
ծաղելով, քան դրագունը, գրապահից հանեց դե-  
ղին ուսնոցով պորտսիգարը:

— Ծիենք, — ասաց նա դառնալով Բաբկա-  
Փոքրիկին, և խփելով սեղանին, վոր բոլորը  
լսեն, ասաց, — լսել ես, վոր մարդ հուզմունքից  
ման գալիս վարտիկը Կորցնի: Այ, կան այնպիսի  
ճահճներ, վորոնք զարմանալիորեն լիքն են  
դրագունների վարտիկներով և չգիտես վորը  
վերցնես վորպես հիշատակ: Յես վերցըել եմ  
մեկը և մի պորտսիգար:



Ֆրանտովը բոլորովին գումատվելով, բռունց  
քով խփեց սեղանին և ասաց.

— Ընկերներ, յես մի գունդ գիտեմ, վոր-  
տեղ բոլոր ձիերն աղը եյին կրում, իսկ մար-  
դիկ առաջնակարգ աղբակիրներ եյին. ահա, յերբ  
մի սենլակում ենք ձեզ հետ, ձեզ չի թվում  
վոր վատ հոտ ե գալիս... Կատարյալ վարակ ե...

Կորշունովը պորտսիգարից հանելով զլա-  
նակը՝ ծխեց, վառած լուցկին շպրտեց դեպի  
դրագունների սեղանը և ասաց.

Բարեկա-Փոքրիկ, աբոզնիկները քոսոտ  
ձիերին մյուս աշխարհն ուղարկելիս, չմոռանաւ  
զըել մի հնգյակ եւ. թե չե նրանք աչք են ծա-  
կում և կանոնավոր մարդկանց խայտառակում:

— Ընկեր դրագուններ, ելի կարմղ եք  
համբերել, թե վոչ, — տեղից կանգնելով գոռաց  
ֆրանտովը, նրա հետ՝ և բոլոր դրագունները:

Լատիշը վախից կպավ պատին:

Կորչեն հուսարները, — գոռաց ֆրանտովը,  
վերցնելով հրացանը և չխկացնելով փակաղակը:

Ամբողջ պանդոկն աղմկից. պանդոկապետու-  
հին ձչաց և նստեց առետրասեղանի յետեր,  
հատակին. գյուղացիները թափեցին սեղան-  
ները, փորձելով բանալ լուսամուտները, վոր  
դուրս թռչեն փողոց:

Ալդադեղ Բեթհովենն այնպիսի թավ ձայնով

ճաց, վոր ապակիները դողային։ Նա դոփում եր ամբողջ ուժով առջեի և յետեի վոտքերով։ Նա այնպես հուսահատ և ահավոր գոռաց, վոր նրա ձայնից բակը լցվեց մարդկանցով։ Դրադունների հաղթանակը յերկար չտևեց։

Բակից և ամեն կողմից գալիս ելին հուսարները։

— Մերոնց ծեծում են, — կանչում ելին նրանք, մերկացնելով սրերը։

Յերբ նրանք կատաղած յեզների նման լըցվեցին բակը, Ֆրանտովն զգաց, վոր բանը բուրդ եւ։

Նա վերցրեց հրացանը կատաղությունից տաքացած ձեռքերով և նշան բռնեց Կորշունովին։ Կորշունովը կանգնած ծիծաղում եր, մերկացրած սուրը ձեռքին և վշտով բաժակներն այս ու այն կողմը խփում։

Ֆրանտովը հասկացավ, վոր լեթե ինքը կրակի Կորշունովի վրա, ալստեղից կենդանի չի դուրս գա։ Հուսարներն արդեն մտել ելին սենյակ։ Նա հրացանը դարձրեց դեպի առաստաղը և կրակեց. ծուխը լցրեց սենյակը։

Բոլորը դոռացին, բայց կանգնած մնացին իրենց տեղերում։ Յերբ ծուխն անցավ, հուսարները կանգնած ելին դրագունների դեմ հանգիման։

Կորշունովը բոլորովին դեղնած, խոպոտ ձայնով տսաց։

— Ընկեր հուսարներ, կանգ առեք, տեղից չշարժվեք, թուլլ տվեք հարցնելու զզկելի դրադունին, թե այս ինչ և նշանակում։

— Այս նշանակում ե հրացանը մաքրել, — ասաց Ֆրանտովը, լուսամուտից դուրս թռչելով դեպի փողոց։

Նրա յետեից դուրս պղծան և մասցած դրադունները. դրագունների յետեից՝ նաև ահաքեկված լատիշը։

Կովի դաշտը մաքրված եր. բայց Ֆրանտովը վերադարձավ լուսամուտի մոտ և գոռաց։

— Իսկ յես ու դու դեռ առանձին կիսունքը Կորշունով, լսում ես։

— Լսում եմ, կիսունք, ինչ կա վոր, — ասաց Կորշունովը։ Այստեղ բաժակների փշրանքները նրա վոտքի տակ ընկնելով, նա հարցրեց։

— Բաքկա-Փոքրիկ, ինչ ե, շնորհքդ ես ցանկացել ցուց տալ, բաժակները ջարդելով։

— Այդ, բարեկամս, դու յես ջարդել և վոչթե յես, — ասաց Բաքկա-Փոքրիկը. — յես հազիվ կարողացա սուրճս խմել..

— Ուրեմն ասում ես յես եմ ջարդել. կնշանակի յես չեմ մտածել..

Նա գնաց Բեթհովենի մոտ, վորը դողում եր

բարկությունից և ապակին գնչով ծեծում, կամենալով ներս մտնել պանդոկը:

V

Բարոնի կալվածքի զոմերում կարելի յեր տեղավորել միայն տասը ձի. այդ պատճառով ել մասցած ձիերին յերկու-յերկու, յերեք-յերեք կանգնեցնում ելին չարգախների տակ, ցախատներում, այնպես վոր որապահի համար դժվար եր հետեւ բոլորին. իսկ նա ել անմենեին հոգ չեր տանում հետեւելու:

Բարկա-Փոքրիկը և Կորշունովը տեղավորվեցին պահապանի փոքրիկ անակում, կալվածքի ծայրամասում՝ անտառի ծայրում։ Այստեղ յերեկոյան թեյից հետո կորշունովը Փրեյտայով նվազեց իր յերգը և Բեթհովենին տարավ քնելու։

Յերբ վերադառնում եր ձիու մոտից, նա կպավ բարձրահասակ մի մարդու. մարդը վախեցած յերերաց և հետո հարգանքով հանեց գլխարկը։

Կորշունովը ճանաչեց բակերավոր լատիշին, վորի ազգանունը Պուլե յեր։

— Ի՞նչ ես թափառում այստեղ, — խիստ կերպով հարցրեց նա. — ի՞նչ ունես այստեղ։

— Յես ձեզ եմ վնասում, պարոն հուսար, — ասաց լատիշը, բարեկելով. — միայն կամաց, գործը շատ հետաքրքիր ե։

Կորշունովը անվստահ մոտեցավ նրան։  
— Հանգուցյալները, — ասաց Պուլեն, — շատ լավ հանգուցյալներ են։

— Ի՞նչ ես զուս տալի, շուն, — ասաց Կորշունովը, — քեզ Ֆրանտովը եռղարկել ծաղրելու։

— Վոչ յերեք, — ասաց Պուլեն, ցույց տալով դեպի անտառի մի կողմը։ Այստեղ դամբարանում թաղված են բարոնները... Շատ վագուց մեռած։

— Ի՞նչ անենք, թող պառկեն...։

— Նրանց պիտի հանել գերեզմանից...։

— Ի՞նչպես թե հանել.

— Բարոններն ունեն թանկագին քարեր, վոսկի, արծաթ...։ Շատ ու շատ. դա շատ պետք կգա հուսարներին։

— Ա, յ դու անպիտան, — ասաց Կորշունովը, — այ թե ի՞նչ ես անում դու այստեղ. Շատ լավ։

Նա բռնեց Պուլեյի ուսերից, նրա յերեսը շրջեց դեպի անտառը և մեջքին այնպես հասցրեց իր հուսարական կոշիկով, վոր գիրուկ լատիշը հինգ քայլ հեռու թռավ։

Հետո նա վեր կացավ, շուրջը նայեց, բռնուցքներն ողում շարժեց և սկսեց փախչել ամբողջ թափով։

Կորշունովը ծիծաղեց և գնաց քնելու։  
Առավոտյան Բարկա-Փոքրիկը, վոր շատ շուտ

եր զարթնում, տակառի մոտ լվացվեց և գնաց դեպի ձիերը, նա վերադարձավ քիչ գունատ և նստեց աթոռին, սենյակի մեջ տեղում, բարձր կրկնելով.

— Այ քեզ բան, ի՞նչ անել, ի՞նչ անել:

— Ի՞նչ ե պատահել, — հարցրեց Կորշունովը, նստելով անկողնում:

— Վոչ թե ինձ, այլ քեզ, — ասաց Բարկա-Փոքրիկը հանգիստ կերպով. — Բեթհովենին գողացել են:

— Ի՞նչպես թե գողացել են.

— Այնպես, տարել են անհետ կերպով:

Կորշունովը մետակ շապկով, առանց վարտիկի, վազեց լուսամուտի մոտ, բացեց, դուրս պրծավ բակը և վազեց կից շենքը. Բարկա-Փոքրիկը հավաքեց նրա շորերը, կոշիկները և գնաց նրա յետելից՝ գլուխը շաբժելով:

Կորշունովը կատաղությունից չգիտեր ինչ անել առավոտյան ցուրտն ել չեր զգում նա:

— Յես յերկար մտածել եմ, — ասաց Բարկա-Փոքրիկը, — վոչ այլ վոք ե, յեթե վոչ ֆրանտովը...

Բայց Բեթհովենը նրան չեր թողնի իրեն մոտենալ: Իսկական գող ե յեղել ինչպիսի ձի յեր, ինչպիսի ձի: Բարկա-Փոքրիկը խփեց ձնկանը:

— Ժամանակ չկորցնենք, հաղնվիր, քանի

դեռ վոչ վոք չգիտի, վերցրու լերկու հուսար և թոփիր գրագունների մոտ: Նրանց եսկադրոնն այստեղ չորս վերստի վրա յե — Պիկարիում, իսկ յես ուրիշ հետք ունեմ:

— Ի՞նչպիսի:

— Տես, ինչ գտա յես, գուան մոտ...

Բարկա-Փոքրիկը շարժեց բացմանիշակադույն թաշկինակը, անկյունում Ե. Պ. տառերով:

— Ե, ի՞նչ:

— Սա նշան ե. յես այս ըոպեյիս գնում եմ քաղաք:

— Քաղաք, ինչու քաղաք:

— Լուսանկարչատուն, — լուրջ կերպով ասաց Բարկա-Փոքրիկը, — հիշում ես այն որիորդին, վոր նկարեց Բեթհովենին...

— Լավ, հետո.

— Յես նրա հետ պիտի նշոնվեմ... Յես դեռ մտածում եյի, բայց յեթե Բեթհովենին պիտի ազատել ապա դրա համար կարելի լի նաև ամուսնանալ:

Նա թամբեց իր ձին և թամբի բարձրությունից մի փոքրիկ ճառ արտասանեց:

— Յեթե ուզում ես քո ձին ճարել, ապա լսիր դու զնում ես դրագունների մոտ, յես քաղաք: Յես Սիբիրում ձիու զողել շատ եմ բռնել: Կգտնենք և դրան: Դա ֆրանտովն է: Կը-

հանդիպենք քաղաքի պանդոկում ժամը 1-ին,  
հիշեր...

Նրանք այդպես բաժանվեցին. այդպես աղ-  
մկալից եռ այդ որը:

Ժամը մեկից տաս ըոպե պակաս եր, և Բաբ-  
կա-Փոքրիկը խմել եր ամբողջ սրճամանի սուրճը  
յերբ քափքրտինքի մեջ կորած՝ մի ձի հաղաց  
պանդոկի դռանը: Մի ըոպելից հետո հոգնած ու  
քրտնած կորշունովը ծանր կերպով բնկավ ա-  
թոռի վրա, նա նման եր մի խեղդվողի, փոշու  
և ցեխի մեջ կորած:

— Յես չեմ կարող տանել,—ասաց նա,—  
յես կայրեմ գրագունների գոմերը իսկ ֆրան-  
տովի գլխին նավթ կթափեմ, յեթե գտնեմ նրան..

— Դու նրան չես գտնի, — ասաց Բաբկա-  
Փոքրիկը, — մի՞թե զու նրան գտար գնդում:

Նա առևտրասեղանի յետեր կանգնած աղջ-  
կանն աղաղակեց.

— Մի սրճաման ել տվեք:

Կորշունովը շեշտակի նայեց նրան և ասաց.

— Ֆրանտովը անցյալ գիշերը փախել ե  
գնդից..

— Փախել ե, տեսնում ես ինչպես արագա-  
շարժն ե...

— Դասալքել ե...

— Խաբում ես, նրան թագցրել են:

— Վոչ, ամենակին ել չեն թագցրել.. Յես  
յեղել եմ շտաբում և ամեն տեղ: Նա գասալիք  
ե և հրամանով արդեն տրված ե. պահակակե-  
տից ե փախել, յես տեսա հրամանը, նա կը-  
պանի Բեթհովենին, իսկ յես՝ նրան:

— Սպասիր, — ասաց Բաբկա-Փոքրիկը, յեթե  
դու յերկու ժամից հետո քո Բեթհովենի վրա  
չլինես, ինչ ուզում ես ինձ ասա, ինձ կենդանի  
թաղիր աղբի մեջ..

— Յես չեմ հասկանում, — ասաց Կորշունովը  
ու մեկ անդամից իմեց մի բաժակ սուրճը:

— Յես քեզ ցույց կտամ թելի ծայրը, —  
ասաց Բաբկա-Փոքրիկը և գրպանից հանեց մի  
լուսանկար:

— Պահիր, — ձեռքով արեց Կորշունովը, —  
յես չեմ կարող նայել Բեթհովենին, չեմ կարող...

— Սա նա չի, — զոռաց Բաբկա-Փոքրիկը, —  
այ քեզ բան, սա բոլորովին նա չե, սա աղջիկ ե..

Յեվ նա մեկնեց նկարը, զորը լուսանկար-  
չատան գեղեցկահեր աղջիկն եր:

Նրան անվանում են Եմմա Պուտե. իսկ Եղ-  
վարդ Պուտեն նրա հայրն ե: Իսկ նրա հայրը  
առաջին ձիագողն ե այստեղ. այսպես, նա յե-  
րեկ նստած եր գրագունների հետ. զու նրան  
հանգիպել ես յերեկ՝ կալվածքում: Կարծում ես

Նա բարոնների համար եր յեկել, վոչ, Բեթհովենի համար եր և տարավ։ Այդպես եւ:

— Ընդունակութեաց կողմէնովը. — իսկ որիորդն ինչանցու յեւ այստեղ։

— Նա իմ հարսնացուն ե... Յես քաղաքում, յերբ շտաբումն ելի, յերեք շաբաթ սուսիկավուսիկ զբաղված եյի նրանով։ Քո Բեթհովենը դժում եւ նրա հոր ֆերմայում... Ո՞վ քեզ հետանաց դրագունների մոտ։

— Սելեզնյովը և Պետրենկոն...

— Իսկ ուր են նրանք։

— Նրանք շուտով այստեղ կլինեն..

— Նստիր ուրեմն, խօսիր, կեր, հանգստացիր և մի հուզվիր։ Այստեղից մինչև Պուտենկես ժամկա ճանապարհ եւ։

## VI

Ազարակը, վորտեղ ապրում եր Պուտեն, կանգնած եր բլրակի վրա, փոքրիկ գետակի ափին, սոսիների անտառի մեջտեղում։ Ինքը Պուտեն նան եր գալիս բակում մեծ քայլերով, ծխամորճը ծծելով և մեղմ ծիծաղում։

Անսպասելի կերպով աղմկեցին կտտաղի վազող ձիերը, և նա չկարողացավ վորեն բան պատկերացնել, յերբ չոքս ձիավոր շրջապատեցին նրան։

— Վո՞րտեղ ե Բեթհովենը, — ահավոր ձայնով գոռաց կորշունովը, բռնելով նրա ուսից։ — Վո՞րտեղ ե իմ ձին, գերեզմանափոր։

Ժպիտն անցավ լատիշի շրթունքներից։

— Զի՞ն, ինչ ձի, յես ձեռք չեմ տվել ձեր յերաժշտական ձիուն։ Վո՞չ, վո՞չ։

— Խուզարկենք, — ասաց Բարկա-Փոքրիկը։ — տղերը, պահեք սրան։

Նրանք թռան ձիերից։ մի հոռար մնաց ձիերը պահելու համար, իսկ կորշունովը Պուտեյի ոձիքից բռնած ման եր ածում բակում։

— Յույց տուր բոլորը։

— Յույց կտամ, կտամ, — ասաց լատիշը։ — Ինչու պիտի թագնեմ։

— Յես քո հոգին կհանեմ, յեթե չգտնեմ, — ասաց կորշունովը. — յես ամեն ինչ գիտեմ։

Լատիշը թքեց և պատասխանեց.

— Յեկեք, յես ձեզ ցույց կտամ. . . Գնանք, միթե յես ել մարդ չեմ. ինձ համար հասկանալի յե, թե ինչքան ծանը ե ձիու կորուստը։ Ի՞նչ-պիսի ձի... Ահա այս իմ խոհանոցն ե։

— Ի՞նչ ես ցույց տալիս, խոհանոցը, մեր ինչին ե պետք քո խոհանոցը։ Տար գոմը և ցախատունը։

Ցերկու եստոնացի բատրակ ցախատանը հացահատիկ եյին ծեծում։ Նրանք, տեսնելով

հուսարներին, թողեցին աշխատանքը և դուրս  
յեկան բակը։ Խուզարկությունը գնում եր կա-  
տաղի կերպով. Բարկա-Փոքրիկը մինչև անդամ  
գնաց խոտանոցը. ամբողջ ագարակը տակն ու  
վրա արին—ձին չկար:

Վերջապես նրանք կանգնեցին ջրհորի մոտ։  
— Յես քեզ կսպանեմ,—ասաց Կորշունովը  
Պուտելին։ — պատասխանատու ել չեմ լինի,  
գիտես։

— Ի՞նչու սպանել ինձ. ի՞չպես կարելի յե  
արդպես խոսել։ Սպանել ինձ. ինչու, խաղաղ  
բնակչիս...

— Հասկացիր,—վորոտաց Կորշունովը.—Նա  
ձի չեր, ոպերա յեր, նա կոմպոզիտոր եր...  
Բոնեցեք ինձ, լեթե վոչ՝ յես գրա գլուխը կը-  
թոցնեմ։

Նա հանեց սուրը և անզոր բարկությամբ  
սկսեց կտրտել մատղաշ խնձորենին։

— Ի՞նչու ծառը վոչնչացնել,—նկատեց Պու-  
տեն։

Կորշունովը դարձավ գեպի նա, բայց Բարկա-  
Փոքրիկը խփեց նրա ուսին և ցույց տվեց փա-  
կած փոքրիկ առանձին նկուղը՝ ցախատան մոտ։  
— Այն ի՞նչ ե այնտեղ,—հարցրին նրանք։  
— Այնտեղ... Այնտեղ աղք ե, խլան, — ա-  
սաց լատիշը,—ճին բաներ։

— Տեսնենք,—ասաց Կորշունովը և միան-  
գամից վոգեորպեց։  
Նա ժպտաց ամբողջ դեմքով և շատ հանգիստ  
ասաց Պուտելին։

— Դու հիմար ես, յես քեզ համար մի քիչ  
կնվագեմ։

Նա հանեց ֆլեյտան, «Աշնանային լուսինը  
բանջարանոցում» նվագի մեղմ, բարակ ձայները  
լցըին ողը. հաղիվ նա նվագել եր առաջին մասը,  
յերբ մի ինչ-վոր հեռավոր, կարծես ստորեր-  
կոյա դղրդյուն լսվեց մառանից։ Լատիշը դեմքը  
ծածկեց ձեռքերով։

Հարվածները լսվում եյին ավելի մոտիկից-  
և հաճախ։ Պարզ եր, վոր դռնից շտապ կպցրած  
տախտակները չպիտի գիմանային։


Կորշունովը նվագում եր ավելի վոգեորպած,  
մի ինչ-վոր տիսուր ուրախությամբ։

Հարվածները թափվում ելին անընդհատ։  
Հանկարծ ջարդվեց ու թուավ վերին ատխտակը,  
նրա յետեկից թափվեցին մյուսները։

Պուտեն նստել եր գերանին, գլուխը կախ։

Ֆլեյտան գեղգեղում եր, ինչպես համերգում.  
տախտակները ցած թուան։ Անսպասելիորեն  
ձիու յետեկի ահապին վոտը յերեաց ձեղում։  
ձին խփեց յետեկի վոտներով մեկ անգամ ել և  
քամակ արած դուրս յեկավ բակը։

Այդ Բեթհովենն եր, բարկացած ու գեղե-  
ցիկ. նա նախեց ու գնաց Կորշունովի մոտ.  
Կորշունովը պարում եր նրա շուրջը՝ ֆլեյտան  
ձեռքին։ Նայելով ձիուն նա դուռաց.



— Ո՞վ ե կարել նրա պոչի մի մասը:  
Ճիշտ վոր Բեթհովենի պոչը կիսով չափ  
կարձացել եր:

— Այդ գուշ յես, գուշ,—գոռաց հուսարը—  
Թափահառելով լատիշին:

— Յես վոչի՞նչ չգիտեմ, վոչի՞նչ ինչացու

յեմ,—գոռաց լատիշը. գրագունն եր, նա յեր գա-  
լիս գնում: Թող ահա իմ աղջիկն ասի, յես կորած  
եմ, յես կորած եմ: Պարմն հուսար, իմ ծեր  
գլուխը չի դիմանա դրան...

Պուպեյի աղջիկը, նկարչական փարթամ մա-  
զերով որիորդը, հերարձակ, դուրս թռավ տնից,  
գուպալով.

— Դուք ինձ խոստացել եք, ո՛, Բաբկա-Փոք-  
րիկ, դուք ինձ խոստացել եք, Բաբկա-Փոքրիկ...

Կորշունովն իրեն կորցրած՝ հանկարծ բռնեց  
նրա արձակված հյուսը:

— Ահա յես ել իմ սրով կկարձացնեմ քո  
աղջկա պոչը...

Բայց Բաբկա-Փոքրիկը սղմեց նրա ձեռքը և  
մի կողմ տարափ:

Կորշունովն զգաստացավ.

— Յես մի փոքր անմտացա, — ասաց նա,  
Ներեցեք, որիորդ, յես անմտացա: Իսկ քեզ,  
ծեր խլուրդ, կկախենք այս խնձորենուց, չգի-  
տեմ ինչպես, պոչդ գեպի վեր, թե՛ ցած...

— Վոչ մի կերպ, — ասաց Բաբկա-Փոքրիկը, —  
այդ որիորդը, վոր իմ հարսնացուն ե, ազատեց  
Բեթհովենին, վորպեսզի դու նրա հորը ձեռք  
չտաս... Հասկանում ես... այլապես դու նրա  
պոչը յերբեք չելիր տեսնի...

— Ընդ, — հանկարծ խոսեց Կորշունովը, —  
թող մտածեմ:

Բեթհովենը կանգնել և նայում եր ինչպես  
հերոս:

— Ի՞նչ ես կարծում, ինչպես կվարվեն  
ֆլանտովի հետ, յեթե նրան բռնեն...

— Կերենսկին կդնդակահարի նրան, — ասաց  
Բաբկա-Փոքրիկը. այդպիսի հրաման նա գրել ե  
վոր մեղ գնդակահարեն, և թե նման բան անենք...  
— Ընդ, — ասաց Կորշունովը, թափ տալով  
Պուպելին, — ասպա դու ձիշտն ասա, Ֆրանտովը  
յերբ կդա այստեղ. չե՞ վոր դու թագցնում ես  
նրան. ի՞նչ կա մտածելու...

— Յես ամեն ինչ կասեմ, — վախեցած ասաց  
Պուպեն: — Յես կորած եմ իմ ծեր զլխով, յես  
ամեն բան կասեմ. թող նա ինքը տուժի. նա  
կդա այստեղ այսոր յերեկոյան. նա ինձ վա-  
խեցրեց. ասաց՝ ամեն ինչ կայրեմ, և ինձ, և աղջ-  
կանս, և տունր, և բոլորը, ինչվոր կա շրջապա-  
տում: Յես վախեցա. այո, այն, այժմ յերբ նա գա,  
դուք հետեւեցեք, և ամեն ինչ պատրաստ կլինի...

— Ա՛յ դու, — ասաց Կորշունովը. — բավական  
ե իմ աշքերին թող փչես. ձին դու լես տարել.  
դու քո հաշիվը լավ գիտես, նու, սատանան  
տանի քեզ: Յես իմ ապօանքը գտա, ուրիշինը  
ինձ հարկավոր չի: Թեկուզ նրան կենդանի կեն-  
դանի աղբի մեջ հորեն: Յես ուրիշ...

Նա հանեց գեղին պղոտսիգարը՝ տրորված  
դրագունյան ուսնոցը վրան և մեկնեց Պուպելին:

— Հիմքը, յերբ Ֆրանտովը գա այստեղ,  
այդ պղոտսիգարը տուր նրան, հասկացած:  
Այդպնես կանեու դա նրա վաստակն ե, տուր  
նրան, հետո մեջքդ ցուց տուր: Իսկ հիմա մեզ  
մի բան տուր ուտենք տեսնում ես, վոր մար-  
դիկ և ձիերը հալից ընկել են:



5302

ԳՐԱԾ 50 ԿՈՎ.

197  
127  
21

Н. ТИХОНОВ  
БЕТХОВЕН  
ГИЗ. ССРА ЗРИВАНЬ